# Տ. ԱՆԴՐԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՁԵԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 ապրիլի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Բայց ասեմ ձեզ, թէ ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ,
մինչեւ ասիցէք՝ օրհնեալ եկեալն յանուն Տեառն»
*(Մատթ. ԻԳ. 39)։*

*Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ եւ քույրեր ի Քրիստոս,*

*Այսօր Մեծի պահոց վեցերորդ եւ վերջին կիրակին է, որը Հայ Եկեղեցում ստացել է Գալստյան կիրակի անվանումը։ Երբ հայացք ենք ձգում արդեն անցած Մեծի պահոց այս կիրակիներին, տեսնում ենք, որ նրանց միջոցով խորհրդական կերպով արտահայտվում է մեր փրկության ողջ պատմությունը. Բարեկենդանի կիրակիով հաղորդակցվում ենք մեր նախածնողների դրախտային կյանքին եւ վերապրում նրանց կատարյալ միությունը Տիրոջ հետ։ Արտաքսման կիրակիով առաջին մեղքի եւ դրա հետեւանքով նրանց՝ դրախտից վտարման ցավն ենք ապրում։ Անառակի կիրակիով հասկանում ենք, որ ինչքան էլ հեռացած լինենք Տիրոջից, վերստին վերադարձի, դեպի Տերը հետ գալու ճանապարհ ունենք։ Տնտեսի կիրակիով գիտակցում ենք, թե ինչքան էլ խրված լինենք մեղքի ճահճում, ինչքան էլ ահավոր եւ սարսափելի լինեն մեր արարքներն ու գործերը, մենք ապաշխարելու եւ Տիրոջ ներումն ստանալու հնարավորություն ունենք։ Դատավորի կիրակիով սովորում ենք, որ երբեք ու երբեք չպետք է հուսահատվենք, միշտ պետք է աղոթենք, գործենք ու աներկբա վստահենք Տիրոջը, եւ այդժամ Աստված ունկնդիր կլինի մեր ձայնին։ Իսկ ահա այս՝ Գալստյան կիրակիով էլ, որը մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջին եւ մասնավորապես Երկրորդ գալստյան խորհրդանիշն է, իր վերջն է գտնելու մեր փրկության ճանապարհը, ավարտվելու են մեր*

երկար ու ձիգ թափառումները, եւ մենք վերստին վերագտնելու ենք մեր աստվածատուր կերպարանքը։

Եգիպտոսի անապատական հայրերից մեկին հարց են տալիս, թե որն է քրիստոնյայի կյանքի իմաստը։ Վերջինս պատասխանում է, որ այն երկու իրողության մեջ է. մեկը՝ սպասումն է, մյուսը՝ պատրաստությունը։ Հիրավի, մեր կյանքը բաղկացած է բազմաթիվ մեծ ու փոքր սպասումներից, ուրախ եւ տխուր սպասումներից, կարեւոր ու անկարեւոր սպասումներից։ Երբ մանուկ ենք, սպասում ենք, թե երբ պետք է մեծանանք, երբ դպրոցական ենք, սպասում ենք՝ երբ պետք է դպրոցն ավարտենք եւ մուտք գործենք մեծ կյանք, երբ մեր ուժերի ծաղկման շրջանում ենք, սպասում ենք, թե մեր նախաձեռնած գործերը երբ պետք է արդյունք տան, երբ արդեն զառամյալ տարիքում ենք, սպասում ենք, վախով ենք սպասում, թե երբ պետք է հրաժեշտ տանք այս կյանքին։ Սակայն մեր կյանքի, համայն տիեզերքի ամենամեծ սպասումը մեկն է՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալստյան սպասումը։ Եւ այսօր մենք՝ բոլորս, հավաքված այստեղ՝ այս փրկության տապանում, որն անվանում ենք Եկեղեցի, միասնական աղոթքով սպասում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալստյանը։

Սիրելինե՛ր, քրիստոնեական սպասումն ինչ-որ վերացական, թմբիրային վիճակ չէ, այլ առաջին հերթին ինքնապատրաստում է, իրական գործողություն։ Երբ մենք որեւէ արժանավոր հյուր պետք է ընդունենք մեր տանը, նախ՝ սկսում ենք այն կարգի բերել, հետո՝ պատրաստում ենք մեր իմացած ամենահամեղ կերակուրներն ու խորտիկները, հագնում ենք մեր ամենաշքեղ, ամենալավ հագուստները, որպեսզի արժանապատվորեն դիմավորենք նրան։ Այդպես եւ հոգեւոր առումով նույնը պետք է կատարենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին սպասելիս։ Պետք է մեր կենցաղը զարդարենք առաքինություններով, զգեստավորվենք հավատքով եւ սրբությամբ, որպես կերակուր Տիրոջը մատուցենք մեր բարի եւ լավ արարքներն ու գործերը, մեր սրտերում ու հոգիներում աճեցնենք հավատքի մանանեխի ծառը, բազմապատկենք Սուրբ Հոգու շնորհները եւ երբեք ու երբեք չպետք է թողնենք, որ մեր հավատքի ճրագը խամրի կամ դադարի լույս տալուց։ Մեր կյանքի չափանիշ պետք է դարձնենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանը, Նրա պատգամները, եւ ահա այդպես՝ ամեն օրվա ջանքերով, ամեն օրվա աշխատանքով, ամեն օրվա ինքնակատարելագործմամբ պետք է սպասենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին։

*Սիրելինե՛ր, առաջին երկու դարերի քրիստոնյաներն ունեին Քրիստոսի Երկրորդ գալստյան կենդանի եւ իրական զգացումը, սակայն հետագայում, առավել եւս այժմ՝ մեր նյութապաշտական ժամանակներում, շատերն արդեն Քրիստոսի Երկրորդ գալուստն ընկալում են որպես ինչ-որ հեռավոր, մշուշոտ իրողություն, անիրականանալի, անիմաստ սպասում:*

*Քրիստոս ասում է, որ մեզ տրված չէ իմանալ Նրա Երկրորդ գալստյան օրն ու ժամը: Այս մասին մի հետաքրքիր պատմություն կա. մի նշանավոր լրագրող այցելում է Աֆրիկայում հիվանդախնամ եւ աղքատախնամ աշխատանք կատարող մի վանականի եւ հարցնում է նրան. «Չե՞ս հոգնել Քրիստոսին սպասելուց: Շուրջ երկու հազար տարի է անցել, ինչ խոստացել էր, որ պետք է գա, սակայն դեռեւս չկա: Ծառայում ես մեկին, Ում չես ճանաչում եւ Ում գալստյան ժամանակն անգամ չգիտես»: Վանականը ժպտում է եւ պատասխանում. «Ամեն օր Քրիստոս այցելում է ինձ, ամեն օր ես տեսնում եմ նրան»: Այնուհետեւ զարմացած լրագրողին առաջնորդում է իր խնամատունը, ցույց է տալիս այնտեղ ապաստան գտած հիվանդներին ու աղքատներին եւ հարցնում. «Մի՞թե չես տեսնում Քրիստոսին»: Այո՛, սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, Քրիստոս ամեն օր այցելում է մեզ՝ աղքատների, սգավորների, կարիքավորների տեսքով: Նայե՛ք մեկդ մյուսի դեմքին, մեկդ մյուսի աչքերի մեջ եւ այնտեղ անպայման կտեսնեք Քրիստոսին: Երբ մեր Տերը գա եւ հարցնի մեզ, թե երբ քաղցած էր, արդյոք կերակրեցիք Իրեն, երբ ծարավ էր, արդյոք խմելու ջուր տվեցիք, երբ օտարական էր, արդյոք հյուրընկալեցիք, երբ մերկ էր, արդյոք հագցրեցիք, երբ հիվանդ էր, արդյոք խնամեցիք, երբ բանտում էր, արդյոք այցելեցիք: Այդժամ մենք ոչ թե ամաչենք, այլ գլուխներս բարձր պահած կանգնենք երկնավոր Արքայի առջեւ, քանզի կատարել ենք Նրա տված պատգամները:*

*Հավատակի՛ց քույրեր եւ եղբայրներ, մեր կյանքը մի հարատեւ եւ անդադար պատրաստություն է, եւ փորձություններով լի այդ ընթացքի մեջ երբեք չպետք է թույլ տանք, որ անհոգության եւ անտարբերության թմբիրը պատի մեզ, այլ միշտ պետք է արթուն լինենք, աղոթենք, գործենք, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանը մեր կյանքի սկզբունք դարձրած՝ սպասենք Նրա գալստյանը:*

*Մեր Տիրոջ սերը, շնորհը, ողորմությունն ու խաղաղությունը թող լինեն ամենքիս հետ. ամեն:*